




ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRICULTURE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/scientific-journal

doi: 10.52276/25792822-2023.1-49

ՀՏԴ 635.621.3:631.522(479.243)

ԴՂՄԻԿԻ ՄԻ ԶԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ԱԳՐՈԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԱՅ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մ.Օ. Հարությունյան *գ.գ.թ.*

Շուշիի տեխնոլոգիական համալսարան

Տ.Բ. Ալոյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

meri.harutyunyan.1987@mail.ru, tatev.aloyan20@mail.ru

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Մ

Քանալի բառեր՝

դրմիկ, սորոտ, բերքատվություն, վեգետացիոն շրջան, տնտեսական արդյունավետություն

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հետազոտությունն իրականացվել է դրմիկի ուսումնասիրվող սորտերի կենսաբանական և տնտեսական ցուցանիշները գնահատելու, առավել արժեքավոր և բարձր բերքատու սորտն արտադրությունում ներդնելու նպատակով:

Ըստ փորձագիտական ուսումնասիրությունների՝ Աննա (ստուգիչ), Ադանա և Չարթոնք սորտերից համեմատաբար երկար վեգետացիա ունեն Ադանա և Չարթոնք սորտերը (72 և 73 օր), որոնք նաև համեմատաբար կայուն են հիվանդությունների նկատմամբ: Իսկ բերքի կառուցվածքային տարրերի և բերքատվության ցուցանիշներով աչքի է ընկնում Ադանա սորտը (510 g/հա):

Ուստի Արցախի Հանրապետության Նախալեռնային գոտու պայմաններում առաջարկվում է մշակել դրմիկի Ադանա սորտը:

Նախաբան

Պտղաբանաչարները վիտամիններով, հանքային աղերով, օրգանական թթուներով, ածխաջրերով հարուստ լինելու, որոշ չափով սպիտակուցներ և ճարպեր պարունակելու շնորհիվ սննդակարգի կարևոր ու անբաժանելի մասն են կազմում: Դրանք համ ու հոտ են տալիս կերակուրներին, դարձնում ավելի ախորժեղի և նպաստում դրանց լավ մարսելիությանը: Միաժամանակ կարգավորում են նյարդային, մարսողական համակարգերի և մի շարք օրգանների գործունեությունը, բարձրացնում են օրգանիզմի դիմադրողականությունը (Ա.Շ. Մելիքյան, 2005, Կ. Arakelyan, 2020):

Դրմիկը, որպես բոստանային կարևոր մշակաբույս, թեև լայնորեն տարածված է աշխարհում, Արցախում բույ-

րովին վերջերս է սկսել շրջանառվել: Հարկ է նշել, որ Արցախի բնակլիմայական պայմանները նպաստավոր են դրմիկի բարձր և որակյալ բերք ստանալու համար: Ուստի կարևորվում է արժեքավոր և բարձր բերքատու սորտերի ընտրությունը:

Գոյություն ունեն դրմիկի բազմաթիվ սորտեր, որոնք տարբերվում են վաղահասությամբ, տնտեսական նշանակությամբ, պտղի մեծությամբ, գունավորմամբ, թավոտությամբ և բշտիկավորությամբ (Ն. Սարուխանյան, 2016, Ս.Ք. Արևիկովա և ըր., 2021, Կ.Ս. Տաննիկովա և ըր., 2020):

Վաղահասության համար կարևոր նշանակություն ունեն ոչ միայն աճման և զարգացման ինտենսիվությունը, առաջին իգական ծաղիկների բացվելն ու պտուղների ձևավոր-

ման արագությունը, այլև այն հանգույցների և ընձյուղների դասավորությունը, որոնց վրա ձևավորվում են իգական ծաղիկները: Տարբեր սորտերի և տեսակների մոտ արական ու իգական ծաղիկները գլխավոր և կողային ցողունների վրա տարբեր բարձրությամբ են դասավորված, ինչը սորտային առանձնահատկություն է: Որքան սորտը վաղահաս է, այնքան քիչ հանգույցներ են առաջանում գլխավոր ու կողային ցողունների վրա (մինչև առաջին իգական ծաղիկների առաջանալը) և հակառակը: Տարբեր սորտերի և տեսակների մոտ տարբեր է նաև իգական ու արական ծաղիկների հարաբերակցությունը: Այն փոփոխվում է նաև արտաքին պայմանների ազդեցությամբ: Արական ծաղիկների քանակը զգալիորեն շատ է՝ 140-430 հատ, իսկ իգականներինը կազմում է 55-83 հատ: Իգական տիպի բույսերի մոտ արական և իգական ծաղիկների հարաբերակցությունը փոփոխվում է: Որպես կանոն՝ գլխավոր ցողունի վրա ձևավորվում են 20 % արական և 80 % իգական ծաղիկներ: Այս տիպի բույսերն ավելի վաղահաս են, քանի որ արական և իգական ծաղիկները բացվում են գրեթե միաժամանակ (В.Ф. Белик, 1982, Т.Б. Фурца, Л.И. Филов, 1982, В.Ю. Михалев, 2003):

Մշակության բարենպաստ պայմաններում ծաղկումը սկսվում է ծիւրը երևալուց 40-70 օր անց: Ընդ որում՝ ծաղկման արագությունը պայմանավորված է մշակության պայմաններով, հատկապես հողի և օդի շերմաստիճանով: Սովորաբար նախ բացվում են արական ծաղիկները, իսկ մի քանի օր անց՝ իգականները: Սակայն որոշ սորտերի մոտ նախևառաջ իգական ծաղիկներն են բացվում: Սովորաբար առաջին հերթին բացվում են գլխավոր և կողային ցողունների ստորին տերևաթուղթները տեղակայված ծաղկաբողբոջները, այնուհետև՝ հաջորդ հարկերինը (В.Ф. Белик, 2000, Г.И. Тараканов и др., 2003, В.Ю. Михалев, 2003):

Հետազոտության նպատակն է դոմիկի ուսումնասիրվող սորտերը գնահատել ըստ կենսաբանական ու տնտեսական ցուցանիշների, և առավել արժեքավոր սորտն առաջարկել ներդնել արտադրությունում:

Նյութ և մեթոդները

Փորձագիտական ուսումնասիրությունները կատարվել են 2021-2022 թթ. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Թաղավարդ համայնքում, որը գտնվում է ծովի մակերևույթից 600 մ բարձրության վրա: Ռելիեֆը հարթ է, թեթևությունը՝ 0,9°: Հողերը շագանակագույն են, ըստ մեխանիկական կազմի՝ թեթև ավազակավային: Հումուսի պարունակությունը կազմում է 3,4 %, հողի հզորությունը՝ $A+B=60$ սմ, տեղումների քանակը՝ տարեկան 470 մմ:

Ուսումնասիրվել են դոմիկի Աննա (ստուգիչ), Ադանա և Չարթոնք սորտերը:

Յուրաքանչյուր սորտ ցանվել է 50 մ² մակերեսով փորձամարզում՝ չորս կրկնողությամբ: Ամեն մի փորձամարզում ցանվել է 123 բույս՝ 10 մ երկարությամբ երկու շարքով,

90+70 սմ միջնարային և 45 սմ միջբուսային հեռավորությամբ: Փորձամարզերը բոլոր կողմերից ունեցել են 1 մ պաշտպանական շերտ: Նախորդ տարի մշակվել է լուլի: Ուսումնասիրությունները և դիտարկումները կատարվել են բոլոր կրկնողություններում:

Ուշագրավ է, որ բոլոր սորտերն ուսումնասիրվել են հողի մշակության և բույսերի խնամքի միևնույն պայմաններում: Ցանքը կատարվել է մայիսի 5-ին: Վեգետացիայի ընթացքում երկու անգամ կատարվել է N_{45} -ական նորմայով սնուցում. առաջինը՝ կոկոսակալման փուլում, երկրորդը՝ պտղակալման սկզբում: Միաժամանակ կատարվել են ֆենոլոգիական դիտարկումներ և կենսաչափումներ: Սելեկցիոն սորտերը գնահատվել են ըստ աճման և զարգացման փուլերի, վեգետացիայի տևողության, հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ դիմացկունության և բերքատվության:

Սելեկցիոն սորտերի կենսաբանական և տնտեսական ցուցանիշները գնահատվել են հետևյալ հերթականությամբ.

1. Գրանցվել են բույսերի աճի և զարգացման փուլերը. նշվել են առաջին տերևների առաջացման, կոկոսակալման, ծաղկման, առաջին պտուղների ձևավորման և հասունացման փուլերը:
2. Կատարվել են կենսաչափումներ. որոշվել են մեկ բույսի իգական ծաղիկների քանակը, մեկ պտղի միջին կշիռը, մեկ բույսից ստացվող բերքի քանակը, յուրաքանչյուր սորտի բերքատվությունը:
3. Որոշվել է հիվանդություններով և վնասատուներով վարակվածությունը. դիտարկումները կատարվել են դաշտային պայմաններում՝ ըստ բնական վարակվածության:
4. Կատարվել է գիտափորձի արդյունքների տնտեսական հաշվարկ:

Բերքատվության տվյալները ենթարկվել են մաթեմատիկական մշակման. կիրառվել է դիսպերսիոն անալիզի մեթոդը (Б.А. Доспехов, 1985):

Արդյունքները և վերլուծությունը

Հետազոտության համար ընտրվել է դոմիկի մշակության ագրոմիջոցառումների այնպիսի համակարգ, որը տվյալ ագրոտեխնոլոգիական պայմաններում հնարավորություն կտա ապահովել բույսերի նորմալ աճ և զարգացում:

Շատ երկրագործական գոտիներում արդյունավետ է վաղահաս սորտերի մշակությունը: Դրանք վաղ գարնանն արագ են աճում, նորմալ բերք են տալիս, իսկ վաղահասությունը թույլ է տալիս խուսափել հետագա անբարենպաստ կլիմայական պայմաններից, այդ թվում՝ ուշ ամառային երաշտի ազդեցությունից: Վաղահաս սորտերի առավելություններից մեկն էլ բնակչությանը վաղ բերքով ապահովելն է: Սակայն հարկ է նշել, որ ուշահաս սորտերը, որպես կանոն, ավելի բերքատու են, քանի որ բերքի կազմավորման ժամանակահատվածն ավելի երկար է:

Յուրաքանչյուր սորտի կենսաբանական և տնտեսական ցուցանիշները գնահատելու համար կարևոր է նաև վեգետացիայի առանձին փուլերի ժամկետների ուսումնասիրումը: Բույսերի աճի և զարգացման ընթացքում տեղի են ունենում քանակական փոփոխություններ, որոնք արտահայտվում են բույսի զանգվածի և ծավալի ավելացմամբ: Միաժամանակ բույսի հասակային որոշակի փուլերում տեղի են ունենում որակական փոփոխություններ, որոնք ուղեկցվում են սոր օրգանների և որակական հատկանիշների առաջացմամբ:

Ֆենոլոգիական դիտարկումները կատարվել են ողջ վեգետացիայի ընթացքում (աղ. 1):

Ուսումնասիրվող սորտերի ծլումը սկսվել է մայիսի 13-ին: Աննա (ստուգիչ) սորտի համեմատությամբ Ադանա և Չարթոնք սորտերի ծլումը և վեգետատիվ օրգանառաջացումն ավելի վաղ են գրանցվել: Այսպես՝ Աննա սորտի համեմատությամբ 1 օր տարբերություն է գրանցվել ծլման, 2 օր՝ առաջին տերևների առաջացման, շուրջ 2-3 օր՝ առաջին կարգի ցողունների ձևավորման ժամկետներում: Բոլոր սորտերի մոտ էլ արական ծաղիկները իգականի համեմատությամբ ձևավորվել են 4-ական օր ավելի շուտ, իսկ փորձարկվող սորտերի իգական ծաղիկները ստուգիչի համեմատությամբ՝ 4-6 օր ուշ, ինչն ազդել է ինչպես պտուղների ձևավորման և հասունացման, այնպես էլ վեգետացիոն շրջանի տևողության վրա:

Առաջին պտուղները ձևավորվել են նախ Աննա սորտի մոտ, իսկ մյուսների մոտ դրանց ձևավորումն ուշացել է 6-7 օրով: Ընդ որում՝ այդ ժամկետների տարբերություններն ազդել են պտուղների տեխնիկական հասունացման ժամկետների վրա, ինչի արդյունքում փորձարկվող սորտերի հասունացումը երկարաձգվել է 9-10 օրով: Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ աճի և զարգացման փուլերի անցման ժամկետները տարբեր են. ավելի վաղ ավարտվել է ստուգիչ Աննա սորտի վեգետացիոն շրջանը (65 օր), մինչդեռ փորձարկվող Ադանա և Չարթոնք սորտերի վեգետացիոն շրջանը երկարաձգվել է 7-8 օրով՝ կազմելով համապատասխանաբար 72 և 73 օր:

Այսպիսով, հաշվի առնելով դրմիկի ուսումնասիրվող սորտերի աճի և զարգացման դինամիկան, առաջին պտուղների ձևավորման և հասունացման ժամկետները, կարելի է եզրակացնել, որ ամենավաղահասը Աննա սորտն է:

Կարևոր է հիմք ընդունել, որ գյուղատնտեսությունում առանձին բույսերի բերքատվությունը որոշվում է տվյալ բույսի ագրոնոմիական առանձնահատկություններով: Դրա վրա ազդում են հետևյալ գործոնները.

- 1. Կլիմայական.** բույսի աճի և զարգացման առանձին փուլերին համապատասխան ջերմաստիճան, խոնավություն, լույս:
- 2. Հողային.** չափավոր խոնավություն, անհրաժեշտ մեկնատարրերի և օգտակար միկրոօրգանիզմների առկայություն:
- 3. Կենսաբանական և ագրոտեխնիկական.** հողի ճիշտ մշակում, պարարտացում, պայթար մոլախոտերի, հիվանդությունների և վնասատուների դեմ, բարձր բերքատու սորտերի մշակում, բարձրորակ սերմնանյութ, ցանքի ճիշտ սահմանված ժամկետներ, չափավոր խոնավություն և խորություն:
- 4. Կազմակերպչական.** ճիշտ ցանքաշրջանառություն, աշխատանքի նյութական շահագրգռվածություն:

Դրմիկի ստուգիչ և փորձարկվող սորտերի կենսաչափական ուսումնասիրության տվյալները ներկայացվում են աղյուսակ 2-ում:

Ստուգիչ և փորձարկվող սորտերը տարբերվում են ինչպես տերևների քանակով, այնպես էլ ձևավորած տերևային մակերեսի մեծությամբ: Եթե ստուգիչ Աննա սորտի մոտ ձևավորվել է 41 տերև, ապա փորձարկվող սորտերի ձևավորած տերևների քանակը կազմել է 5-8-ով ավելի, ինչն էլ ազդել է տերևային մակերեսի մեծության վրա:

Առավել մեծ տերևային մակերես ձևավորվել է փորձարկվող Ադանա սորտի մոտ՝ 686 դմ² (49 տերև): Այն ստուգիչին գերազանցել է 112 դմ², իսկ Չարթոնք սորտը՝ 70 դմ² տերևային մակերեսով:

Աղյուսակ 1. Դրմիկի սորտերի աճի և զարգացման փուլերը*

Տարբերակներ	Ցանքի ժամկետը	Ծլում	Առաջին իսկական տերևի առաջացումը	Առաջին կարգի ցողունների ձևավորումը	Երկրորդ կարգի ցողունների ձևավորումը	Ծաղկման սկիզբ		Պտուղների ձևավորման սկիզբը	Պտուղների տեխնիկական հասունացումը	Վեգետացիայի տևողությունը, օր
						արական	իգական			
Աննա (ստուգիչ)		14.05	22.05	30.05	09.06	08.06	12.06	16.06	18.06	65
Ադանա	05.05	13.05	20.05	01.06	11.06	12.06	16.06	22.06	27.06	72
Չարթոնք		13.05	20.05	02.06	11.06	14.06	18.06	23.06	28.06	73

*Կազմվել է հեղինակների կողմից:

Աղյուսակ 2. Դժմիկի սորտերի կենսաչափական ուսումնասիրության արդյունքները*

Տարբերակներ	Բույսերի քանակը, հատ/հա	Տերևների քանակը, հատ	Տերևային մակերեսը, դմ ²	Ցողունների քանակը, հատ	Ցողունների գունարային երկարությունը, սմ	Իգական ծաղիկների քանակը, հատ	Արական ծաղիկների քանակը, հատ	1 բույսի պտուղների քանակը, հատ	Պտղակալումը, %	1 պտղի միջին կշիռը, գ
Աննա (ստուգիչ)	24600	41	574	1	35	18	23	12	66,6	210
Ադանա	24600	49	686	1	51	22	29	16	72,7	240
Չարթոնք	24600	46	644	1	48	15	28	10	66,6	235


*Կազմվել է հեղինակների կողմից:

Վեգետացիայի ընթացքում հաշվարկվել է նաև ուսումնասիրվող սորտերի իգական և արական ծաղիկների քանակը: հատկապես ուշադրություն է դարձվել իգական ծաղիկների քանակին: Աննա սորտի համեմատությամբ Ադանա սորտի մեկ բույսի իգական ծաղիկների քանակը 4-ով ավելի է: Սակայն Ադանա սորտի մոտ 6,1 %-ով ավելի պտուղներ են կազմավորվել, մեկ պտղի կշիռն էլ 30 գրամով ավելի է: Չարթոնք սորտի մեկ բույսի մոտ հաշվարկվել է 15 իգական ծաղիկ, պտուղներ են կազմավորվել 10-ից, ինչը ստուգիչ սորտի համեմատությամբ մոտ 3 %-ով քիչ է: Սակայն մեկ պտղի կշիռը 25 գրամով ավելի է ստուգիչ սորտի նույն ցուցանիշից:

Հատկանշական է, որ փորձարկվող սորտերը պտղատվությամբ ևս գերազանցել են ստուգիչ սորտին: Առավել բարձր բերք (240 g/հա) ստացվել է Ադանա սորտից: ստուգիչին գերազանցել է 15 %-ով: Իսկ փորձարկվող Չարթոնք սորտը նույն ցուցանիշով գերազանցել է ստուգիչին ընդամենը 3 %-ով, սակայն էականորեն զիջել մեկ բույսի վրա ձևավորված պտուղների քանակով (25 g/հա):

Այսպիսով՝ Աննա սորտի համեմատությամբ Ադանա սորտի մոտ ձևավորվել են ավելի շատ իգական ծաղիկներ և մեծ կշռով պտուղներ: Մեկ բույսից ստացվել է միջինը 3,8 կգ բերք, որը գերազանցել է ստուգիչ սորտի նույն ցուցանիշը: Իսկ Չարթոնք սորտը բերքի քանակով զիջում է մյուս երկու սորտերին:

Ըստ աղյուսակ 3-ի՝ Ադանա սորտն ապրանքային բերքով (487,5 g/հա) նույնպես գերազանցել է Աննա և Չարթոնք



ՊՃ. Դժմիկի ուսումնասիրվող սորտերի բերքատվությունը (կազմվել է հեղինակների կողմից):

սորտերին, ինչը փաստում է, որ այն ավելի բերքատու է: Դժմիկի սորտերի բերքատվության գծապատկերի համաձայն՝ լավագույնը Ադանա սորտն է, որը գերազանցել է ստուգիչին 135 g/հա-ով: Չարթոնք սորտը բերքատվությամբ 30 g/հա-ով զիջում է ստուգիչին, չնայած մեկ պտղի կշիռը 25 գրամով գերազանցում է ստուգիչին՝ հասնելով մինչև 235 գ: Հատկապես կարևորվում է առաջարկվող ցանկացած նոր սորտի դիմացկունությունը տարբեր վնասատուների և հիվանդությունների նկատմամբ, քանի որ վերջիններս ամբողջ աշխարհում միլիարդավոր դոլարների վնաս են պատճառում գյուղատնտեսությանը՝ առաջացնելով տարեկան միջին հաշվով 20-30 % բերքի անկում:

Աղյուսակ 3. Դժմիկի սորտերի բերքատվությունը*

Տx%=0,3 % ԱԷ:Տ_{0,95}=5,03 g

Տարբերակներ	1 բույսից ստացվող բերքը, կգ	Բերքատվությունը, g/հա	Ապրանքային բերքը		Ոչ ապրանքային բերքը	
			g/հա	%	g/հա	%
Աննա (ստուգիչ)	2,5	375	351,7	93,8	23,3	6,2
Ադանա	3,8	510	487,5	95,6	22,5	4,4
Չարթոնք	2,3	345	327,0	94,8	18,0	5,2

*Կազմվել է հեղինակների կողմից:

Աղյուսակ 4. Դդմիկի սորտերի տնտեսական գնահատականը*

Տարբերակներ	Միջին բերքատվությունը, գ/հա	Լրացուցիչ բերք, գ/հա	Լրացուցիչ բերքի արժեքը, հազ. դրամ	Լրացուցիչ բերքի ստացման նպատակով կատարված ծախսերը, հազ. դրամ					Լրացուցիչ շահույթ, հազ. դրամ	Շահութաբերության մակարդակը, %
				աշխատավարձ	կյուղական ծախսեր	մեք. շահագործման ծախսեր	այլ ծախսեր	ընդամենը ծախսեր		
Աննա (ստուգիչ)	375	-	-	-	-	-	-	-	-	-
Ադանա	510	135	810,0	170,0	95,0	85,0	40,0	390,0	420,0	108
Չարթունք	345	-30	-	-	-	-	-	-	-	-

*Կազմվել է հեղինակների կողմից:

Չետագոտության ընթացքում փորձատարածքում գրանցվել է դդմիկի բույսերի վարակվածությունն ալրացողով (*Ascomycetes* դաս, *Erysiphales* կարգ): Ընդ որում՝ ալրացողի նկատմամբ առավել խոցելի է դդմիկի Աննա սորտը, որի վարակվածությունը կազմել է 10-11 %: Ադանա և Չարթունք սորտերը համեմատաբար կայուն են ալրացողի և մյուս հիվանդությունների նկատմամբ: Վեգետացիայի ընթացքում ալրացողի դեմ պայքարի նպատակով դդմիկի բույսերը 20 օրը մեկ անգամ սրսկվել են Բայլետոնի թրջվող փոշու 0,02 %-անոց կախույթով: Լվիճների դեմ կիրառվել է ֆունգիցիդ (400 գ/հա նորմայով):

Աղյուսակ 4-ում ներկայացված տնտեսական գնահատման համաձայն՝ Ադանա սորտն Աննա սորտին գերազանցել է 135 գ/հա-ով, իսկ Չարթունք սորտը՝ զիջել 30 գ/հա-ով, ուստի արդյունավետության հաշվարկը կատարվել է միայն Ադանա սորտի համար. հիմք է ընդունվել դդմիկի իրացման միջին գինը՝ 6000 դրամ/գ, լրացուցիչ բերքի արժեքը կազմել է 810000 դրամ:

1 հա-ից ստացված շահույթը որոշելու նպատակով հաշվարկվել են լրացուցիչ բերքի ստացման հաշվով կատարված ծախսերը (390000 դրամ), այսինքն՝ զուտ եկամուտը կազմել է 420000 դրամ: Որոշվել է նաև շահութաբերության մակարդակը, որը Ադանա սորտի մոտ կազմել է 108 %:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրվող բոլոր սորտերն ունեն կենսաբանական բարձր արժեք: Ստուգիչ և փորձարկվող սորտերի վեգետացիայի տևողությունը տատանվել է 63-71 օրվա սահմանում: Համեմատաբար կարճ է տևել Աննա սորտի վեգետացիան՝ 63 օր, իսկ Ադանա և Չարթունք սորտերինը կազմել է համապատասխանաբար 70 և 71 օր:

Հիվանդությունների նկատմամբ համեմատաբար կայուն են Ադանա և Չարթունք սորտերը, իսկ վնասատուներով վարակվածության տարբերությունն աննշան է:

Փորձարկվող սորտերը աչքի են ընկել բերքի կառուցված-

քային տարրերի ցուցանիշներով: Ընդ որում՝ պտղատվության տոկոսային ցուցանիշով Ադանան գերազանցել է ինչպես Աննա, այնպես էլ Չարթունք սորտերին: Այն բարձր բերքատվությամբ ստուգիչին գերազանցել է 135 գ/հա-ով, միաժամանակ տնտեսական բարձր արդյունավետությամբ ապահովել է 135 գ/հա բերքի հավելում և մեկ հեկտարի հաշվով 420000 դրամ լրացուցիչ շահույթ:

Ըստ հետազոտության արդյունքների և տնտեսական արդյունավետության հաշվարկի՝ առաջարկում ենք ԱՀ Նախալեռնային գոտու պայմաններում մշակել դդմիկի Ադանա սորտը, քանի որ այն բարձր բերքատու է և ապահովում է շահութաբերության բարձր մակարդակ:

Գրականություն

1. Մելիքյան Ա.Շ. Բանջարաբուծություն. - Եր., 2005. - 504 էջ:
2. Սարուխանյան Ն. Դդմազգի մշակաբույսեր: Ուղեցույց. - Եր., 2016. - 47 էջ:
3. Арипова Ш.Р. и др. Результаты конкурсного сортоиспытания новых сортов кабачка в Узбекистане / Ш.Р. Арипова, С.И. Дусмуратова, Р.А. Хакимов // Овощи России. - 2021. - N 6. - С. 30-35. <https://doi.org/10.18619/2072-9146-2021-6-30-35>.
4. Белик В.Ф. Бахчеводство. - М.: Колос, 1982. - 175 с.
5. Белик В.Ф. Кабачки и другие тыквенные. 2-е изд. перераб. и доп. - М.: Колос, 2000. - 48 с.
6. Доспехов Б.А. Методика полевого опыта (5-е изд.). - М.: Агропромиздат, 1985. - 351 с.
7. Михалев В.Ю. Особенности производства семян бахчевых на фармакологические цели с применением механизированной уборки в условиях Волгоградского Заволжья. Авт. дисс. НХИИО. - М., 2003. - 23 с.

8. Санникова Т.А. и др. Влияние сорта и степени зрелости плода на органолептические показатели цукатов из кабачков / Т.А. Санникова, В.А. Мачулкина, Л.В. Павлов, А.В. Гулин // Овощи России. - 2020. - N 1. - С. 42-44. <https://doi.org/10.18619/2072-9146-2020-1-42-44>.
9. Тараканов Г.И. и др. Овощеводство / Г.И. Тараканов, В.Д. Мухин и др. - М., 2003. - 278 с.
10. Фурса Т.Б., Филов Л.И. Тыквенные. - Т. 21. - М.: Колос, 1982. - 279 с.
11. Arakelyan, H. (2020). Pattypan Squash and Health, - pp.1-3.

Оценка агробиологических показателей некоторых сортов кабачков в условиях Мартунинского района Республики Арцах

М.О. Арутюнян

Шушинский технологический университет

Т.Б. Алоян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: кабачки, сорт, урожайность, вегетационный период, экономическая эффективность

Аннотация. Исследования проводились с целью оценки биологических и экономических показателей изучаемых сортов кабачков и внедрения в производство наиболее ценного и высокоурожайного сорта.

Согласно опытным данным, из сортов Анна (контроль), Адана и Зартонк относительно продолжительный период вегетации имеют Адана и Зартонк (72 и 73 дня), они также наиболее устойчивы к болезням. А по структурным элементам урожая и показателям урожайности выделяется сорт Адана (510 т/га).

Исходя из полученных результатов, в условиях предгорной зоны АР рекомендуется культивировать сорт кабачка Адана.

Assessment of Agrobiological Characteristics of Some Marrow Squash Zucchini Varieties in Conditions of Martuni Region of Artsakh Republic

M.O. Harutyunyan

Shushi University of Technology

T.B. Aloyan

Armenian National Agrarian University

Keywords: marrow squash, variety, yield, vegetation period, economic efficiency

Abstract. The implemented research was aimed to evaluate the biological and economic indicators of the studied varieties of zucchini, to introduce the most valuable and high-yielding variety into production.

Expert studies were conducted in 2021-2022 in the Taghavard community of the Martuni region of the Republic of Artsakh, located at an altitude of 600m above sea level. Anna (control), Adana and Zartonk zucchini varieties were studied. Each cultivar was planted in a 50 m² plot with four replications. In each plot, 123 plants were planted in two rows of 10 m length, with 90+70 cm inter-row and 45 cm inter-plant distance. During the vegetation period, feeding with the norm of N 45 was done twice. Breeding varieties were evaluated according to growth and development stages, duration of vegetation, resistance to diseases and pests, and yield indicators. According to research, the Adana and Zartonk have a relatively long vegetation period (72 and 73 days), and the Adana (510 cent/ha) stands out in terms of crop structural elements and yield indicators. Adana and Zartonk are relatively resistant to diseases, and the difference in pest infestation is insignificant.

Adana surpassed both Anna and Zartonk in terms of fruit percentage. It exceeded the high-yield control by 135 cent/ha, at the same time, with high economic efficiency, it provided 135 cent/ha crop addition and AMD 420.000 additional profit per hectare.

It is recommended to cultivate the Adana zucchini variety in the sub-mountainous zone of the Artsakh Republic.

*Ընդունվել է՝ 25.07.2022 թ.
Գրախոսվել է՝ 04.11.2022 թ.*